Արձանագրություն N 03

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/23» ծածկագրով գնանշման հարցման գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

28 սեպտեմբերի, 2023թ, ժ 16:00,
«Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ,
Շիրակի մարզ,
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Մկրտչյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

Շուռիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետ,

Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ

Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ.

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/23» ծածկագրով ԳՀ ընթացակարգի միջոցով մրցույթի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

---

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 18.09.2023թ. էլեկտրոնային եղանակով տեղադրվել է www.gnumner.am հասցեում:

1.2 «Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ -ի կարիքների համար «Գյումրի քաղաքի փողոցների երթևեկելի մասում, ասֆալտբետոնե ծածկույթում ճաքերի բիտումով լցափակման աշխատանքներ»-ի ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/23» ծածկագրով ԳՀ ընթացակարգի համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի	
Անվանումը	Հասցեն
«ԼԻՎԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1 շենք, գրասենյակ 105
«ԼԻԳՈ-ՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ, 26փ, տ 31/1
«Էլիտ Արման Շին» ՍՊԸ	ՀՀ, ք. Գյումրի, Խանջյան 9

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ ներառյալ հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի տեսքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող փաստաթղթերը: Փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

1.6. Մասնակիցների առաջարկած գները

ՀՀ դրամ

ՀՀ	Ապրանքի անվանում	«ԼԻՎԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ		«ԼԻԳՈ-ՇԻՆ» ՍՊԸ		«Էլիտ Արման Շին» ՍՊԸ		Նախահաշվային գին
		Ընդհանուր արժեքը առանց ԱԱՀ	Ընդհանուր արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	Ընդհանուր արժեքը առանց ԱԱՀ	Ընդհանուր արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	Ընդհանուր արժեքը առանց ԱԱՀ	Ընդհանուր արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	ներառյալ ԱԱՀ-ն
1.	«Գյումրի քաղաքի փողոցների երթևեկելի մասում, ասֆալտբետոնե ծածկույթում ճաքերի բիտումով լցափակման աշխատանքներ»	14 000 000	**16 800 000**	15 000 000	18 000 000	18 658 350	22 390 020	**22 500 000**

Հանձնաժողովը արձանագրեց՝

- Գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Գյումրի քաղաքի փողոցների երթևեկելի մասում, ասֆալտբետոնե ծածկույթում ճաքերի բիտումով լցափակման աշխատանքներ»-ի ձեռքբերման ընթացակարգին մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները Պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գնի սահմանում են:
- Գյումրու համայնքապետարանի կողմից հայտարարված «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/23» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԼԻՎԱՐԴ ՇԻՆ» և «ԼԻԳՈ-ՇԻՆ» ՍՊԸ-ների ներկայացրած հայտերում բացակայում էր աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:
- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման 41-րդ կետի համաձայն անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- Մեկ աշխատանքային օրվա ընթացքում «ԼԻՎԱՐԴ ՇԻՆ» և «ԼԻԳՈ-ՇԻՆ» ՍՊԸ-ները ներկայացրեցին աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը, որը բավարարում էր հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝

- Ընտրված մասնակից ճանաչել նվազագույն գնային առջարկ ներկայացրած **«ԼԻՎԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ-ին**:
- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենիք 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում տվյալ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10 օրացուցային օրը ներառյալ ժամանկահատվածը:

Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին կուղարկվի պայմանագրի նախագծերը, ինչն անհրաժեշտ է 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել և ներկայացնել պատվիրատուին: Անհրաժեշտ է նաև ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Մ. Մկրտչյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝

---------- Շ.Հակոբյան(ԳՊ/ԳԱ)

---------- Օ. Գևորգյան (ԳՊ/ԲԱ)

---------- Լ. Բարսեղյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ---------- Ա. Սարգսյան (ԳՊ/ՄՀմ)